ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ԽԱՂԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մ. Խ. ՆԱՐՅԱՆ

Գևորգ Ախվերդյանից մինչև մեր օրերը սայաթնովագետները բանաստեղծի գրական ամբողջ վաստակին կամ այդ վաստակի առանձին հարցերի նվիրել են ուշագրավ աշխատություններ, լուծել են նրա փոթորկալի կյանքի պատմության և մեծ արվեստի բազմաթիվ խնդիրներ։ Սակայն դեռ կան քննության ու լուսաբանության կարոտ շատ հարցեր։

Ստորև մենք ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Սայաթ-Նովայի ստեղծագործության հետ առնչվող որոշ դիտողություններ։

1. ՋՐՆԱՂ ՀԵՔԱԼ

Սկանդարի Զուլղարեն թողած,
ջրնաղ հեքալ արմանալու։

Այդ է գեղանին երգչի համար։ Այդպես է նրան երգել «Հրնդկաց քաղաքիցըն հանած» խաղում[1]*։*

Ի՞նչ է այդ ջրնաղ հեքալը, որը երգիչը կապում է Սկանդարի Զուլղարի, այսինքն Ալեքսանդր Մակեդոնացու հետ և հարմար է գտնում սիրուհու անօրինակ գրավչության պատկերման համար որպես համեմատություն օգտագործել։

Հեյքալ կամ հեքալ բառը Սայաթ-Նովայից առաջ ունի նաև Նաղաշ Հովնաթանը. Նաղաշի խաղում այն նշանակում է համայիլ, պատկեր.

Վզեն կախել ես հեքալ, շամբար[2]։

Մի ուրիշ խաղում Նաղաշ Հովնաթանը դարձյալ դիմում է սիրուհուն և ասում առավել որոշակիորեն.

Վիզդ ձգել ես զանշիլով հեյքալ համայիլ[3]։

Ա. Զոպանյանի կազմած Նաղաշյան դրքում հեքալ բառը բացատրված է արձան[4]*։*

---

1 Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց և խմբագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ 63 (այսուհետև՝ Սայաթ-Նովա, 1963)։

2 Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, ժողովածուն պատրաստեցին Ասատուր Մնացականյան, Շուշանիկ Նավարյան, Երևան, 1951, էջ 6 (այսուհետև՝ Նաղաշ Հովնաթան)։

3 Նույն տեղում, էջ 45։

4 Ա. Զոպանյան, Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 120։

Նաղաշի գիրքը կազմող սովետահայ բանասերները հեքիաթ բառը մեկնաբանել են որպես հուռութ, հմայիլ[5]։ Հեքալը նաև պատկերն է, արձանիկը, կուռքը։

Սայաթ-Նովայի վերոհիշյալ տողի մեկնաբանության մեջ, ինչպես երևում է, Գարեգին Լևոնյանը հետևել է հեքալ բառի՝ Նաղաշի կիրառած մի երանգին և գրել է. «Հեքալ (հեյքել)—հուռութ, բժժանք»[6]։ Սայաթնովագետ Ռ. Աբրահամյանը ուրիշ բան է ենթադրել. «Հեքալ (հեյքալ)—կերպարանք, հասակ»[7]։ Մ. Հասրաթյանը փորձել է մի փոքր այլ կերպ ընկալել. «Հեքալ (հեյքալ)—արձան. անդրի. գեղաքանդակ. նաև բժժանք (թրլիսմ). ջնաղ հեքալ—կիսանդրի»[8]։ Ջնաղ բառը Մ. Հասրաթյանը առանձին չի մեկնաբանել։ Ա. Քոչոյանը, որի բառարանի հիմքը Սայաթ-Նովայի խաղերի՝ Մ. Հասրաթյանի 1959 թ. կազմած ժողովածուն ու բառարանն է, գրում է. «Հեքալ—արձան, կիսանդրի։ Ջընաղ հեքալ—կիսանդրի»[9]։ Քոչոյանը մեկնել է ջնաղ բառը. «Ջնաղ—անրակ»[10]։ Եվ բերել է խաղի նույն տողը։ Եթե հեքալը արձանն է, կիսանդրին, ջնաղը՝ անրակը, ապա ջնաղ հեքալը կլինի անրակով արձան—կիսանդրի։ Բան կհասկացվի՞ այդպիսի մեկնաբանությունից։

Արևելքի խոսք ու զրույցներին, ավանդություն-առասպելներին, աշխարհակալ մեծերի ոչ միայն պատմություններին, այլև կենսագրությունների բնորոշ մանրամասներին քաջահմուտ երգիչը, որ սիրուհուն համեմատում է աշխարհի հազվագյուտ գեղարվեստական հրաշալիքների հետ, այդքան առկախ չէր թողնի խոսքը. ի՞նչ է նշանակում Սկանդարի Զուլղարի թողած «հուռութք, բժժանք ես», «կերպարանք, հասակ ես», «արձան, կիսանդրի ես»։ Կամ կա՞ ակնարկ իսկ, թեկուզ ավանդություններում, որ նման բաներ կապվել են Մակեդոնացու անվան հետ, նա այդ ի՞նչ զորավոր թալիսման է ունեցել, որի համբավը անցել է ավելի քան երկու հազար տարվա ճանապարհ, հասել Սայաթ-Նովային ու նրա խաղով էլ հասնում է մեզ... Եթե նույնիսկ մի պահ ընդունենք, թե Մակեդոնացու թողած հեքալը բժժանք է, ջնաղ հեքալը՝ կիսանդրի, պիտի բնականորեն հարց տանք՝ ի՞նչ են եղել դրանք, ինչպիսի՞ հատկություններ են ունեցել, որ երգիչը դրանց հետ է համեմատում գեղուհուն, որի մասին ասում է.

Աշխարհիս շվամ իս անում[11]...
Արեգպի դեմրն փար իս[12]։

Մեր ուշադրությունը գրավեց մի ավանդություն, որը ըստ ամենայնի բացահայտում է «ջնաղ հեքալի» դաղտնիքը։

---

5 Նաղաշ Հովնաթան, էջ 322։

6 Սայաթ-Նովա, Հայերեն խաղերի լիակատար ժողովածու, կազմեց, բանասիրական հոդվածներով օժտեց և ծանոթագրեց Գարեգին Լևոնյան, Երևան, 1932, էջ 184 (այսուհետև՝ Սայաթ-Նովա, 1932)։

7 Սայաթ-Նովա, Թեհրան, 1943, էջ 174։

8 Սայաթ-Նովա, 1963, էջ 296։

9 Ա. Քոչոյան, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Երևան, 1963, էջ 110։

10 Նույն տեղում, էջ 157։

11 Սայաթ-Նովա, 1963, էջ 17։

12 Նույն տեղում, էջ 37։

Ալեքսանդր Մակեդոնացու ամենասիրելի ընկերն ու փայլուն զորավարը՝ Հեփեստիոնոսը, մահանում է նրա աչքի առաջ։ Մակեդոնացին, որի համար հանգուցյալը նույնն էր, ինչ որ Պատրոկլեսը Աքիլլեսի համար, ուզում է Հեփեստիոնոսին այնպես թաղել իր աթոռանիստ Բաբելոնում, որպեսզի ոչ միայն գերագանցի բոլոր նախորդներին, այլև հաջորդները չկարողանան չափվել իր հետ նաև այդ ոլորտում։ Եվ հրամայում է բոլոր հարևան քաղաքներին՝ օգնել, որ թաղումը աննման լինի։ Ասիայի բոլոր բնակիչներին հրամայում է՝ մինչև թաղման ավարտը հանգցնել սրբազան կրակը, որ պարսիկները անում էին արքա թաղելիս։ Զորավարներն ու բարեկամները արքային հաճոյանալու համար հանգուցյալի պատկերը արվեստագործել են տալիս փղոսկրից, ոսկուց և նման թանկագին նյութերից։ Ինքը՝ Մակեդոնացին, կառուցում է 30 սենյականոց, քառակուսի, փյունիկյան արմավենու ծածկով հինգհարկանի մի տաճար։ Քառակուսի տաճարի ամեն մի կողմի երկարությունը եղել է շուրջ 250 քայլ։ Հարթեցված տարածության վրա, տաճարի չորս բոլորը, կերտում են գեղեցիկ արձաններ. առաջին հարկը զարդարում են նետաձիգների ու այլ զինյալ մարդկանց 240 ոսկե արձաններով, մյուս հարկերը Մակեդոնացին զարդարել է տալիս դարձյալ ոսկե արձաններով, ոսկեձույլ, մարդաչափ կանթեղներով, պսակներով, քաջության խորհրդանիշ արծվի և իմաստության խորհրդանիշ օձի, որսի կենդանիների, արքայի խորհրդանիշ առյուծի արձաններով։ Այդպես՝ հինգ հարկն էլ։ Բարձրում ի տես է դնում մակեդոնական և բարբարոսական զենքեր, որոնցից մեկը վկան էր հաղթանակի, մյուսը՝ պարտության։ Եվ այդ բոլորի վրա իշխում էին գեղուհի ծովահարսերի ոսկեկերտ սնամեջ արձանները, որոնց մեջ գտնվող երգչուհիները, Մակեդոնացու այցելության պահին պետք է թախծատխուր երգեին և նրա հետ սգային իր անանց վիշտը, միաժամանակ այն պատրանքն ստեղծվեր, որ ասես թե ծովահարսերը ծովերից եկել են տաճար, արձանացել և երգով ողբում են Մակեդոնացու հետ նրա ծանր կորուստը... Այդ անօրինակ կառույցի վրա ծախսվել է ավելի քան 12 հազար տաղանդ ոսկի։ Ի դեպ, նկատենք, որ այդ փաստը հիշատակված է նաև Ռոմեն Ռոլանի «Կոլա Բրյունոն» վեպում. «Հապա մի նայիր քո Ալեքսանդրին,— ասում է հերոսներից մեկը մյուսին,—մի՞թե քեզ չի զայրացնում այն, որ նա իր սիրունատես, պաշտելի Հեփեստիոնոսի թաղման վրա վատնում է մի ամբողջ ժողովրդի գանձերը»[13]։

Մեր համոզմամբ Մակեդոնացու թողած ահա այդ սքանչելիք տաճարն է աչքի առաջ ունեցել երգիչը, երբ գրել է.

Սկանդարի Զուլղարեն թողած,
ջրնաղ հեռալ արմանալու։

Արաբերեն, պարսկերեն և արևելյան ուրիշ լեզուներով հեռալը հենց մեծակառույց տաճարն է, մեհյանը։ Այսպես, պրոֆ. Խ. Կ. Բարանովը իր Արաբերեն-ռուսերեն բառարանում հեքալը բացատրում է. «1. Հսկայական, վիթխարի։ 2. Տաճար, մեհյան։ 3. Մեծակառույց շենք։ 4. Մեծամեծ կերտվածք։ 5. Հիմք, կմախք»[14]։ Ս. Ս. Զուլչյանի և Հ. Ս. Սարգիսյանի բառարանում հե-

[13] Р. Роллан, Избранные произведения, М., 1936, էջ 492։
[14] Х. К. Баранов, Арабско-русский словарь, М., 1957, էջ 1102—1103։

քալը մեկնված է. «1. Ահագին, հսկայական։ 2. Մեհյան, խորան։ 3. Հսկա, խոշոր շենք։ 4. Կմախք, կարկաս»[15]։ Ըստ ամենաճոխ և ամենաընտիր պարսկերեն-հայերեն բառարանի հեքալը նշանակում է «տաճար, պալատ, ձև. կերպարանք, հասակ»[16]։ Ասենք նաև, որ հելլ՛ալ բառից յ կիսաձայնը երգիչը բաց է թողել բնականաբար. իր բարբառը թե՛ հայերեն և թե՛ օտար բառերի յ գիրը խիստ հաճախ չի պահպանում. լույսը դրում է լուս, գյոգալը՝ գոզալ և այլն։ Թուրքերենում հեքալը լինում է. «1. Մեծահաղթ իրք։ 2. Սկայագործ շինվածք։ 3. Տաճար, կռոց, մեհյան։ 4. Կուռք։ 5. Մենաստան, տաճար։ 6. Պատկեր, արձան»[17]։ Նաև՝ «1. Արձան։ 2. Տաճար»[18]։

Արդ, որտեղի՞ց է երգչին հասել Ալեքսանդր Մակեդոնացու թողած այդ հելլ՛ալի պատմությունը։ Հավանական է, որ այդ ավանդության մասին նա լսել է իր հալեպցի հորից։

Իսկ ինչո՞ւ է երգիչը անվանում այդ տաճարը ջնաղ տանար՝ ջնաղ հելլ՛ալ։ Այդ բանը մեր կարծիքով կապված է տաճարը զարդարող թևավոր գեղուհիների՝ ծովահարսերի հետ, որոնք, ըստ առասպելի, կիսամարդ էին և կիսաթռչուն։ Ահա այդ գեղուհիներին էր ոսկուց ձուլել տվել, ահա դրանց աստվածային ձայնով էր տաճարը լցնում Մակեդոնացին։

Հավանաբար, Սայաթ-Նովան «թևավոր տաճար»— ջնաղ հեքալ գրելով՝ ուզում է ասել թևավորների, ծովահարսերի տաճար, քանի որ նրանք էին իրենց երգով կենդանացնում տաճարը։

Ջնաղ բառը արաբերեն[19], պարսկերեն[20] և մի քանի արևելյան լեզուներով նշանակում է հենց թև, թևավոր։ Ի դեպ, բուն արաբերեն ջնահ բառը երգիչը գրել է ջնաղ՝ թիֆլիսահայ արտասանությանը հավատարիմ մնալու համար, ինչպես հաճախ է անում հայերեն և օտար բառերի նկատմամբ։

Հեփեստիոնոսի մահվան, թաղման, Սկանդար Զուլղարի կառուցած ջնաղ հեքալի գրավիչ պատմությունը շարադրված է Արրիանոսի (90/95—175 թթ.) «Ալեքսանդրի արշավանքը» գրքում[21]։ Այդ հատորում զետեղված են նաև Պլուտարքոսի (46—120 թթ.) նշանավոր «Ալեքսանդր» աշխատությունը և Դիոդորոսի (80—29 թթ. մ. թ. ա.) «Պատմական գրադարանի» XVII գիրքը։

2. ԱՇԽԱՐՈՒՄԸՍ ՔԱՆԻ ՍԱՂ ԽՍ...

Այս կիսատողը, որ արել ենք վերնագիր, վերցրել ենք «Խաբար զընաց բըլբուլի մոդ»[22]— խաղից, որի վերջին երկու տողն է մեզ զբաղեցնում։ Երգիչը այդ երկու տողով դիմում է սիրուհուն.

---

15 Ս. Ս. Զուլչյան, Հ. Ս. Սարգիսյան, Արաբերեն-հայերեն բառարան, Բեյրութ, 1969, էջ 818։

16 Գ. Կիրակոսյան, Բառարան պարսկերեն-հայերեն, Թեհրան, 1933, էջ 753։

17 Ա. Քյուփելյան, Երևելագվյան բառագիրք տաճկերեն-հայերեն-գաղղերեն, ի Վիեննա, 1883, էջ 426—427։

18 Մ. Արիգյան, Ընդարձակ բառարան տաճկերենն հայերեն, Կոստանդնուպոլիս, 1892, էջ 637։

19 Ս. Ս. Զուլչյան, Հ. Ս. Սարգիսյան, Արաբերեն-հայերեն բառարան, էջ 226։

20 Գ. Կիրակոսյան, Բառարան պարսկերեն-հայերեն, էջ 159։

21 Арриан, Поход Александра, пер. с древнегреческого М. Е. Сергеенко, М.—Л., 1962.

22 Սայաթ-Նովա, 1963, էջ 69։

Աշխարումս բանի սաո իս. Սայաթ-Նովի գերեզմանին
Շահ-Աբասի Լալի նման, շահի՝ վրեն գալուն մընում է:

Ո՞վ է Լալը, որի անունը այս տողերում կապվում է Շահ-Աբասի հետ, և ինչպե՞ս հասկանանք երգչի այդ խոսքերը՝ սիրուհիս, աշխարհումս քանի սաղ ես, Սայաթ-Նովի գերեզմանը սպասում է քո այցելությանը այնպես, ինչպես Շահ-Աբասի Լալը (կամ Լալի գերեզմանը)՝ շահի այցելությանը:

Պահպանվել է Շահ-Աբասի՝ գերեզման այցելելու մի պատմական նշանավոր փաստ, և հավանաբար այդ փաստն է աչքի առաջ ունեցել Սայաթ-Նովան վերոհիշյալ խաղի մեջ:

Մեր կարծիքով բերված երկտողում պիտի լինի ոչ թե Շահ-Աբասի Լալի նման, այլ Շահ-Աբասի ալի նման: Ալը զարմն է, տոհմը. պարսկերեն, թուրքերեն և արևելյան ուրիշ լեզուներով նշանակում է «սերունդ, ցեղ, զարմ, գերդաստան»[23], «1. Род, семейство; 2. Династия» [24],

Արդ, որտեղի՞ց է գալիս գերեզմանի այցելության այս պատմությունը:

XVIII դարի պատմիչ Խաչատուր Ջուղայեցին, որ բնիկ պարսկահայ է, քաջածանոթ պարսից պատմությանը, իր «Պատմութիւն Պարսից»[25] երկում մեզ զբաղեցնող խնդրի վերաբերյալ հաղորդում է հետևյալը. Շահ-Թահմազից հետո գահ է բարձրանում ապագա պարսից թագավոր Շահ-Աբասի յոթ հորեղբայրներից մեկը՝ Շահ-Իսմայիլ II-ը: Սա «սուր ի գործ արկեալ սպան զիւր եօթն եղբայրս հարազատս»[26], սպանել է տալիս նաև բազում նախարարների, իր զորքի նշանավոր մարդկանց՝ «զոմանս յայտնի, և զոմանս ի գաղտնի»[27]: Ուզում է այնպես անել, որպեսզի յոթ եղբայրներից ու նշանավոր մարդկանցից որևէ մեկն աչք չունենա գահին: Արքայի մտերիմները, վախենալով որ հերթը իրենց կհասնի, հանկարծակի հարձակվում են Շահ-Իսմայիլ II-ի վրա՝ «զանխլաբար սպանանեն զնա: Որոյ բովանդակեալ զժամանակ տէրութեանն ամս 2»[28]: Ապա գնում են Խորասան, բերում Շահ-Իսմայիլ II-ի սրից զերծ մնացած նրա եղբորը՝ Խուդաբանդային և կարգում թագավոր: Երևի տկարության պատճառով Խուդաբանդան չէր գնացել Արտավիլ և չէր արժանացել իր յոթ եղբայրների բախտին: Կամ գուցե արյունախումը ի դեմս նրա չէր զգացել իրեն դիմադրող զորություն, ուստի և անտեսել էր, քանի որ Խուդաբանդան, ասում է պատմիչը, «էր անարի, և վատթար ի գործ թագաւորութեան. նաև ի յաչաց լուսոյ պակասեալ, որ հանապազ այպն առնէին զնա և կատակէին զանագանիւք եղանակօք ամենայն զորք նորա»[29]: Եվ երբ թշնամին հարձակվում է, քաղաքներ գրավում, Շահ-Խուդաբանդան «ոչինչ արութիւն ցուցեալ յազգին իւրում, մեռանի. թագաւորեալ ընդ ամենայն ամս 2»[30]:

Հորը հաջորդում և 30 տարեկան հասակում պարսից գահն է բարձրանում Խուդաբանդայի որդին՝ Աբասը և դառնում Շահ-Աբաս: Նորընծա արքան ամե-

23 Գ. Կիրակոսյան. Բառարան պարսկերեն-հայերեն. էջ 51:

24 Д. А. Магазаник. Турецко-русский словарь. М. 1945. էջ 25:

25 «Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից», Վաղարշապատ. 1905, էջ 150:

26 Նույն տեղում. էջ 100:

27 Նույն տեղում:

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում, էջ 101:

30 Նույն տեղում:

նից առաջ խաղաղեցնում է երկիրը և ապա կատարում է այն, ինչ գտնում ենք Սայաթ-Նովայի երգի մեջ՝ գնում է իր մորթված ալի՝ նախնիների գերեզմաններին այցելության, գնում է «առ ի բաշխել զնուէրս և զրնծայս ի շիրմի հարցն իւրոց և հաւուց»[31]։

Սայաթ-Նովան աղաչում է սիրուհուն՝ ես էլ քո սիրուց անմեղ կսպանվեմ Շահ-Աբասի զարմի՝ ալի նման և կսպասեմ քո այցելությանը, ինչպես որ ալի գերեզմանը սպասում էր շահի այցելությանը։

3. ԽԱԼ ԵՎ ԵՐԿՈՒ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ

Սայաթ-Նովան 1753 թ. ստեղծած «Յար, քիզ իսկի դավալ չելի» խաղը եզրափակում է հետևյալ երկտողով.

Իրեմ քսան ու տասրն խալրն էրեսիտ բոլորքրն շար ա,
Վունցոր Սայաթ-Նովու լիզուն յոթանասուն բառ բացարած[32]։

Ժամանակին Վրաստանում և Հայաստանում ամուսնացած հարուստ կանայք կրում էին նաև մի զարդ, որը Վրաստանում կոչվում էր սամբեուրի[33], իսկ Հայաստանում՝ խալ. ոսկու կլոր հատիկներն ու մարգարիտները մեջընդմեջ հաջորդում էին միմյանց, իսկ այդ ամբողջ թելաշարը, կամ միայն մարգարիտի շարանը, կամ միայն ոսկու հատիկների շարանը ձգվում էր կնոջ երեսի բոլորքով. գլխազարդ թագի ճակատի մասով, նրան միացած, գալիս էր շարանը քունքի վրայով, անցնում ծնոտի տակով և մյուս քունքի վրայով գնում-միանում էր մյուս ծայրին։ Այդ էր իսկապես երեսի բոլորքը, այսինքն ամբողջ երեսի ձվածիրը բռնող խալավոր՝ հատիկավոր կանացի թանկագին զարդը։ Այդ խալով՝ այդ զարդով է զարդարված Վրաստանի XVIII դարի երկրորդ կեսի ականավոր պետական գործիչ Գարսևան Ճավճավաձեի (1757—1811) կինը, որի դիմանկարում պարզորոշ երևում է (ի թիվս ջիղայավոր իշխանական թագի, ադամանդակուռ խաչի և այլ զարդերի) նաև այդ զարդը, որ ժամանակի նկարչի վրձնի գործ է[34]։ Այդ նկարից շուրջ մեկ դար հետո նույն զարդը, որ Վասպուրականում կոչվել է շավա[35], հասել է մեզ երկու լուսանկարով. մի դեպքում՝ սոսկ զարդը[36], մյուս դեպքում՝ նույն զարդը կանանց երեսի բոլորքը[37], բայց այլ նյութից պատրաստված՝ արծաթակերտ։

Թերևս ավելորդ չլինի նկատել, որ Վրաստանում նույնիսկ Աստվածամոր պատկերները դրվագելիս նրա երեսի բոլորքը դեռ շատ հնուց զարդարում էին ճիշտ այդպիսի սաքբեուրի-խալ կոչվող զարդով։ XII դարի այդպիսի բազմաթիվ պատկերներ հասել են մեր օրերը[38]։

---

31 Նույն տեղում։

32 Սայաթ-Նովա, 1963, էջ 55։

33 Ш. Амиранашвили, История грузинского искусства, М., 1963, էջ 359:

34 Նույն տեղում, էջ 359, նկ. 224։

35 Ե. Լալայան, Վասպուրական, «Աղգագրական հանդես», գիրք 20, Թիֆլիս, 1910, էջ 136։

36 Նույն տեղում, էջ 140։

37 С. Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958, աղ. XXX, նկ. 1։

38 Ш. Амиранашвили, նշվ. աշխ., էջ 141, 143։

Խալից բացի, հնուց ի վեր բավական տարածված էր նաև խալխալ ապարանչանը. կտրվածքի մանր հատիկների նման կլորիկ արծաթե և ոսկե հատիկներից առանձին-առանձին պատրաստում էին ապարանչաններ[39], մի բան, որ հայերի կենցաղը նկարագրելիս նկատել ու պատկերել է Ֆրանց Վերֆելը 1930-ական թթ. սկզբներին[40]։ Այդ զարդը նույնպես մի ավելորդ անգամ հաստատում է, որ խալը նաև առհասարակ կլորիկ հատիկն է։ Եվ այդ տեսակի ոսկե ու արծաթե ապարանչանները խալխալ են կոչվել, խալերով՝ կլորիկ հատիկներով շինված լինելու համար։ Կանացի երեսի ընտիր, թանկագին զարդն էլ խալ է կոչվել, և ինքը Սայաթ-Նովան խալ է անվանում, խալերով՝ կլորիկ հատիկներով պատրաստված լինելու պատճառով։

Քանի որ ժամանակին տարածված էր այն հավատալիքը, որ մարդու առավելագույն կյանքը յոթանասուն տարի է, երգիչը իր խաղի «իրեք քսան ու տասրն» խալով, որ սիրուհու «էրեսի բոլորքրն շար ա», նրան մաղթում է, թշնամու չարակամությանը հակառակ, առավելագույն կյանք՝ յոթանասուն տարի։

Իսկ ի՞նչ է ուզում ասել երկրորդ տողով՝ «Վունցոր Սայաթ-Նովու լիզուն՝ յոթանասուն բառ բացարած»։

Մենք կարծում ենք, որ այս յոթանասունը կապվում է Աստվածաշնչի «յոթանասնից» կոչված թարգմանության հետ։ Ըստ բանաստեղծական մի ավանդության, Մակեդոնացու զորավարներից մեկը՝ Պտղոմեոս Եղբայրասերը (Ֆիլադելֆը), երբ Հին կտակարանը թարգմանել էր տալիս եբրայերենից հունարեն (283—282 թթ. մ. թ. ա.), ընտրում է յոթանասուն թարգմանիչների, դնում նրանց յոթանասուն խցերում, կարգում սպասարկողներ ու հսկիչներ, որպեսզի ոչ մի թարգմանիչ մյուսի հետ չշփվի։ Եվ երբ բոլորը ավարտում են թարգմանությունը, համեմատում են ու տեսնում, որ անգամ մի բառի տարբերություն չկար, որովհետև բոլորն էլ իբր «ներշնչված էին Աստծո շնչով»։

Սայաթ-Նովան էլ ասում է. իմ լեզվից բխող յոթանասուն բառն էլ սուրբ են, ինչպես այն յոթանասունի բառերը, քանի որ դու էլ, սիրուհիս, սրբություն ես ինձ համար և դու ես ներշնչել իմ բառերը։

Հայ սայաթնովագիտությունը մեզ հետաքրքրող տողերին տվել է անհամոզիչ մեկնություններ։ Գ. Ախվերդյանը ոչ մի բան չի գրել։ Գ. Լևոնյանը բնավ չի մեկնել քննարկվող երկու տողերից առաջինը[41], իսկ երկրորդի կապակցությամբ բավարարվել է մի անորոշ հարցով. «Յոթանասուն թիվն այստեղ որևէ միտք ունի՞, թե՞ երգիչը գործ է ածել միայն մի քառավանկ թիվ ունենալու համար, դժվար է իմանալ»[42]։ Մ. Հասրաթյանը, բերելով երկու տողը լրիվ, գրել է. «Առաջին երեք թվերը (իրեք քսան ու տասրն-- Մ. Ն.) մենք հասկանում ենք ոչ թե 70 խալ, որ անհնարին և անճաշակ բան է, այլ ԳԻԺ-ԳԺՎԵՑՆՈՂ խալեր (Գ—3, Ի—20 և Ժ—10), այնպես, ինչպես Սայաթ-Նովայի

39 Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, Երևան, 1944, էջ 299։

40 Ֆրանց Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը։ Գերմաներենից թարգմանեց Պարույր Միքայելյան, Երևան, 1964, էջ 212։

41 Սայաթ-Նովա, 1932, էջ 169։

42 Նույն տեղում, էջ 170։

լեզվի բազմաթիվ (յոթանասուն) բառերը, որոնք նույնպես խենթացնող են իրենց գեղեցկությամբ»[43]։ *Ինչպես տեսնում ենք, Մ. Հասրաթյանը վերցնում է միայն խալեր բառը, բայց բաց է թողնում* բոլորքն *բառը, ըստ էության հեռանալով երգչի տեքստից։*

ФИЛОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ О НЕКОТОРЫХ ПЕСНЯХ САЯТ-НОВЫ

М. Х. НАРЯН

(Резюме)

Великий сын армянского народа поэт Саят-Нова своим творчеством ознаменовал целую эпоху не только в армянской литературе, но и в грузинской и азербайджанской.

Филологами сделано многое для раскрытия богатств творчества поэта. Однако многие грани его классического литературного наследия еще ждут своих исследователей.

В статье сделана попытка толкования отдельных строф некоторых стихов Саят-Новы. Смысл этих строф до настоящего времени не был ясен.

---

43 *Սայաթ-Նովա, 1963, էջ 246։*